«Էդիտ Պրինտ» հրատարակչություն

ԱՎԱՐՏԱԿԱՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

Հաստատություն՝«Հեքիաթ» մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ

Դաստիարակ՝Քնարիկ Ստեփանյան

Ղեկավար՝Ժաննա Ավետիսյան

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն……3

Գլուխ 1. Ազգային տոները և ծեսերը……4

1.1 Ազգային տոները հեթանոսությունից մինչև քրիստոնեություն……4

1.2 Ինչ է ծեսը,ծիսակարգը և սովորույթը: Դրանց դերն ու նշանակությունը……9

Գլուխ 2 Ազգային ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում ……12

2.1 Երեխայի զարգացման կարևորագույն նախապայմանը……12

2.2 Ազգային ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում……16

Եզրակացություններ ……18

Օգտագործված գրականության ցանկ……19

Ներածություն

Երեխայի զարգացմանը, ինչպես նաև նրա անձնավորության ձևավորմանը նպաստող խթանները պայմանականորեն միավորում ենք երեք խմբի՝ կենսաբանական, սոցիալական և մանկավարժական:Երեխայի զարգացման և նրա անձի ձևավորման գործընթացները փոխկապված են: Անձնավորությունը մարդու սոցիալական նկարագիրն է և բնութագրում է մարդկային այն որակները, որոնք ձեռք են բերվում հասարակության մեջ՝ մարդկանց հետ հարաբերվելու ընթացքում: Ես առաջարկում եմ ազգային ծիսական միջավայր, որտեղ կարելի է զարգացնել երեխայի ստեղծագործական կարողությունները, երևակայությունները՝ բնական, ազատ, իրական գործունեության ճանապարհով:Ազգային ծեսն այն միջավայրն է, որտեղ բոլորը, ազգի մշակույթը յուրացրած, ինքնադրսևորվելու, ստեղծագործելու, որոնելու, հայտնաբերելու, երևակայելու, իմացածը կիրառելու լայն հնարավորություն ունեն: Ամեն տարիք իր չափով է ներառվում այդ գործընթացին, և միասին ստեղծում, իրականացնում են իրենց ծեսը: Նախադպրոցական տարիքի սաներին, մասնակից դարձնելով տարբեր ծեսերին և ծիսական արարողություններին և ընդգրկելով գործունեության տարբեր ձևերում, նպաստում ենք նրա զարգացման տարբեր ոլորտների խթանմանը:

Այն երեխայի զարգացման համար ստեղծում է պարարտ հող՝ մի շարք խնդիրների լուծմ ան համար:

21–րդ դարի սկզբին հայտնվել ենք մի տխուր փաստի առջև. մենք կորցրել ենք ազգային շատ կարևոր արժեքներ և փորձում ենք վերականգնել կորցրածը: Այս գործը պետք է սկսել վաղ հասակից, այսինքն՝ ծնված օրվանից: Երեխան դաստիարակվում և սովորում է՝ յուրացնելով մեծերի փոխանցած մշակույթը: Եթե ընտանիքում, հասարակության մեջ չի պահպանվել ավանդականը, ապա այդ գործն իր վրա է վերցնում պետությունը կամ կրթօջախը՝ սկսելով նախակրթարանից և շարունակելով մինչև դպրոցն ավարտելը: Գործնական մասն իրականացնելիս մասնավորապես փորձարկել և ուսումնասիրել ենք երեխայի խոսքի, հաղորդակցության և երևակայության զարգացման վրա ծիսական գործունեության ազդեցությունը: Գործնական աշխատանքը ցույց տվեց, որ նախադպրոցական տարիքի երեխան ծիսական բնական, անկաշկանդ, ազատ միջավայրում կիրառում է իր գիտելիքները, հմտություն է ձեռք բերում, զարգանում է երևակայությունը, կարողանում է ազատ արտահայտել իր միտքը: Կարողանում է կողմնորոշվել և կատարել համապատասխան գործողություններ՝ բանավոր խոսքի միջոցով հիմնավորելով, ներկայացնելով իր երևակայությամբ ստեղծած միտքը:

Գլուխ 1 .Ազգային տոները և ծեսերը

1.1 . Ազգային տոները հեթանոսությունից մինչև քրիստոնեություն

Հայոց ազգային տոները տարբեր ժամանակներում տարբեր դրսևորումներ և վերաիմաստավորումներ են ունեցել: Սակայն այս տոների արմատներն այնքան խորն են եղել ժողովրդի ինքնագիտակցության մեջ, որ ժամանակի կրոնաքաղաքական փոփոխությունները նույնպես չեն կարողացել ազդել դրանց վրա: Հայկական մշակույթը հնուց ի վեր, մինչ օրս էլ, աչքի է ընկնում իր բազմաթիվ և յուրօրինակ ազգային տոներով: Մենք բոլորս այս տոները նշում ենք, որպես քրիստոնեական և եկեղեցական տոներ, սակայն այս տոների մեծ մասը գալիս է դեռևս նախաքրիստոնեական ժամանակներից: Այստեղ փորձել ենք առանձնացնել մի քանի ազգային տոներ, որոնք երկար ճանապարհ են անցել հեթանոսությունից մինչև քրիստոնեություն:

Սուրբ Զատիկն ու Անահիտ աստվածուհին

Ամբողջ քրիստոնյա աշխարհում Զատիկը համարվում է Քրիստոսի հարության տոնը: Զատիկ անվանումն առաջացել է զատել բառից, որը նշանակում է զատվել և հեռանալ մեղքերից: Այն համարվում է եկեղեցական 5 տաղավար տոներից մեկը և այս օրն ամբողջ քրիստոնյա աշխարհը տոնում է Քրիստոսի հարությունը, իրար հայտնելով ավետիսը՝ «Քրիստոս հարյավ ի մեռելոց» և ի պատասխան ստանալով՝ «Օրհնյալ է հարությունը Քրիստոսի»:Սակայն հայոց աշխարհում զատկի տոնի արմատները շատ ավելի հին են: Զատիկը հնում համարվում էր գարնանացանի տոնը և նվիրված էր Անահիտ դիցուհուն, ով էլ հովանավորում էր մայր հողի բեղմնավորումը: Զատիկն այստեղ կրկին ծագում է զատել բառից, քանի որ հենց Անահիտն էր, որ միմյանցից զատում էր բնության գույները: Ըստ ավանդության, երբ ջրհեղեղից հետո Արացիները բնակություն հաստատեցին Արարատյան դաշտում, նրանք նկատեցին, որ ծիլ ու ծաղկունքն ամբողջությամբ գորշությամբ է պատված: Եվ Արիների նահապետ Մանը զոհեր է մատուցում Անահիտ աստվածուհուն՝ խնդրելով նրան, որպեսզի վանի գորշությունն ու իրենց վերադարձնի բնության հազարավոր գույները: Սակայն Անահիտը պատասխանում է, որ բնության գույները կարող է վերադարձնել միայն Հազարան հավքը, որը դյութիչ ձայնով երգում է և գույնզգույն ձվեր ածում, որով և նորոգվում են բնության գույները: Բայց այժմ հավքը պահվում է ստորգետնյա թագավորությունում, և Մանը պետք է ազատի և վեադարձնի նրան:Մանը վերադառնում է Արարատ Հազարան հավքի հետ: Նա հավքին դնում է գետնին, և հավքը սկսում է երգել՝ բազմաթիվ գույներ ճառագելով և

գույնզգույն ձվեր ածելով: Այնուհետև Անահիտը, գալով Արարատ, հավաքում է գույնզգույն ձվերը և շաղ տալիս ողջ դաշտով մեկ: Իսկ այնուհետև պատվիրում է
հավքին բույն դնել Արարատ լեռան վրա և մշտապես գույներ տարածել երկրի վրա: Եվ այդ օրվանից Արիները սկսում են ուրախ վարել և ցանել հողը, իսկ մանուկները, ջահել հարսներն ու աղջիկները մինչև ուշ երեկո երգում, պարում ու ձվախաղ են խաղում:Ի տարբերություն քրիստոնյաների, ովքեր զատկի ձվերը ներկում են մուգ կարմիր գույնով (Քրիստոսի թափած արյան գույնը), Արիացիները զատիկի ձվերը ներկում էին բոլոր հնարավոր գույներով: Նրանց համար զատկի տոնի իմաստը կյանքի վերածնունդը և բնության գարնանային զարթոնքը տոնելու մեջ էր:

Վարդավառն ու Աստղիկ աստվածուհին

Վարդավառը քրիստոնյա աշխարհում տարածված է, որպես Քրիստոսի պայծառակերպության օր, որը նշվում է Քրիստոսի հարությունից հետո 98-րդ օրը: Տոնի ժամանակ ժողովրդական սովորույթներից է միմյանց վրա ջուր ցողելն ու աղավնիներ բաց թողնելը, որոնք խորհրդանշում են ջրհեղեղը, Նոյի ընտանիքի փրկությունը և Նոյի աղավնուն:Հեթանոսական շրջանում Վարդավառ տոնը նվիրված է եղել Աստղիկին: Աստղիկը հայոց դիցարանում համարվում էր սիրո և գեղեցկության աստվածուհին, ինչպես նաև ամպրոպի աստված Վահագնի սիրեցյալը:Ըստ ավանդազրույցի՝ Աստղիկը ծնվել է ծովի փրփուրներից և որտեղ որ քայլում էր, նրա ոտքերից կաթկթացող արյան հետքերի տեղում վարդեր էին բուսնում: Ատղիկ աստվածուհին նաև երկնքից վարդեր շաղ տալով հայ աղջիկներին օժտում էր աստվածային գեղեցկությամբ: Վարդավառը հայոց աշխարհում ամենասիրելի տոներից մեկն էր և տոնվում էր մեծ շուքով: Այդ օրը բոլորը միմյանց վրա ջուր էին ցանում և իրար սեր ու գեղեցկություն տալիս: Տոնի ընթացքում նրանք փառաբանում էին Աստղիկին և միմյանց նվիրում տոնի խորհրդանիշը՝ վարդը:Ըստ արիական ավանդույթներից մեկի՝ ստորգետնյա աստվածն առևանգում է Աստղիկին, որի հետևանքով արիների միջից վերանում են սերն ու գեղեցկությունը, և նրանց հոգիներում բույն է դնում ատելությունը: Բոլորը դառնում են տգեղ ու անգութ: Բայց Վահագնը, հաղթելով հրեշին, ազատում է Աստղիկին և, շրջելով Հայոց աշխարհով, արիներին օծում է վարդաջրով, վարդավառ է սարքում և նրանց վերստին օժտում աստղիկյան սիրառատությամբ: Հնում մարդիկ Վարդավառը նշել են հիմնականում գետերի աղբյուրների կամ լճերի ափին՝ այնտեղ, որտեղ ջուրն առատ է եղել: Վարդավառը նաև համարվել էր ջրի տարերքի պաշտամունքի տոն: Հայերի մեջ տարածված են ջրի և անձրևաբերության հետ կապված բազմաթիվ ծեսեր: Ջուրն ասոցացվել է նաև կապույտ գույնի հետ, որը և՛ պարզություն, և՛ մաքրություն է խորհրդանշում: Համաձայն շումերական աղբյուրների, հայերը Հայա տիեզերական ջրերի և իմաստության աստծո

որդիներն են, և ըստ «Սասնա ծռեր» էպոսի՝ հայերը պաշտել են ջուրը և իրենց համարել ջրից ստեղծված (Սանասար և Բաղդասար):Վարդավառը համարվում է նաև խնձորի տոնը: Ընդունված սովորություն կար, որ մինչև Վարդավառ խնձոր չէին ուտում: Եվ Վարդավառին՝ խնձորի բերքի օրհնությունից հետո, նոր կարելի էր բերքը հավաքել և օգտագործել:

Մարիամ Աստվածածինն ու Անահիտը

Բոլորին ծանոթ է Մարիամ Աստվածածնի վերափոխման կամ Խաղողօրհնեքի տոնը: Այն ևս հանդիսանում է Հայ Առաքելական եկեղեցու 5 տաղավար տոներից մեկը:Ըստ ավանդույթի՝ Մարիամ Աստվածածինը Քրիստոսի խաչելությունից հետո 12 տարի շարունակ այցելում է որդու գերեզմանին և աղոթում: Սակայն մի օր աղոթքներից մեկի ժամանակ նրան է այցելում Գաբրիել հրեշտակը և նրան հայտնում դեպի երկինք իր վերափոխվելու մասին: Հայաստանում, քրիստոնեության ընդունումից հետո, Մարիամ Աստվածածինն ընդունեց Անահիտին վերագրվող բոլոր հատկությունները: Իսկ Անահտական տաճարները վերածվեցին Աստվածածին եկեղեցիների: Անահիտին նվիրված տոները վերագրվեցին Աստվածածնին, քանի որ ժամանակին Անահիտի մեջ էին ամփոփված կնոջ և մայրության բոլոր առաքինությունները:Իսկ խաղողօրհնեքի ավանդույթները շատ ավելի հին են, քան քրիստոնեությունը և կապվում էին Նավասարդի տոնակատարությունների հետ: Հնում Անահիտ աստվածուհուն է նվիրված եղել նաև խաղողօրհնեքը, որը նշվել է որպես բերքի տոն: Խաղողօրհնեքի առաջին պտուղը նվիրաբերել են Անահիտին: Հայոց դաշտերում և այգիներում փառաբանման ծես է կատարվել, որից հետո էլ սկսվել է բերքահավաքը: Տոնին մասնակցել են բոլորը, ինչն ուղեկցվել է տոնին հատուկ երգերով, պարերով և խաղերով:

Քրիստոնեության ընդունումից հետո Խաղողօրհնեքի տոնը միացվեց Մարիամ Աստվածածնի վերափոխման հետ: Սակայն այդ օրը եկեղեցում օրհնվում է միայն խաղողը, քանի որ այն համարվում է ազնվագույն մրգերից մեկը և, բացի այդ, խաղողից էր պատրաստվում նաև պատարագի գինին:

Տիրոջն ընդառաջ կամ Տրնդեզ

Հայ առաքելական եկեղեցին ամեն տարի՝ Քրիստոսի ծնունդից 40 օր հետո նշում է Տյառնընդառաջը: Տյառնընդառաջի տոնը համարվում է Տիրոջն ընդառաջ գնալու հրավեր բոլորի համար:Հնում տրնդեզը կրակին նվիրված տոն է եղել: Ըստ հին հայկական պատկերացումների՝ տրնդեզի վառվող կրակի բոցերն ավելի էին ջերմացնում արևին և այդպիսով մեղմում էին ցուրտը և արագացնում գարնան գալուստը: Քանի որ հայերն իրենց համարում էին Արևի որդիներ, նրանք պաշտում էին նաև արևի երկրային տեսակը՝

կրակը: Տոնի ժամանակ կրակի վրայով թռչելով՝ մեր նախնիները հաղորդակցվել են բնության տարրերի հետ: Ըստ որոշ մեկնաբանությունների՝ տրնդեզ բառը նշանակում է դիզված կրակ: Հեթանոսական շրջանում Տյառնընդառաջի ծխի ուղղությամբ մարդիկ կատարել են գուշակություններ: Ծխի միջոցով մարդիկ գուշակել են տարվա բերքառատությունը: Ծխի ուղղությամբ նաև փորձել են գուշակել՝ որտեղից է գալու հարսնացուն կամ փեսացուն: Տրնդեզի կրակը վառել են հիմնականում ցորենի հասկերից: Կրակի վառվելու ընթացքում կանայք սկուտեղի վրա բերում էին Տյառնընդառաջի տոնական կերակրատեսակները՝ փոխինձը, չամիչը, աղանձը, ընկույզը, բոված սիսեռը և պտտեցնում կրակի շուրջ, իսկ դրա որոշ մասը շաղ տալիս կրակի վրա: Այնուհետև, երբ կրակի բոցն արդեն թուլանում էր, սկսում էին թռչել կրակի վրայով: Եթե կրակի վրայից թռչելիս փեշը անզգուշությամբ վառվում էր, դա համարվում էր հաջողության նշան:Մուսալեռան բնակիչների մեջ տարածված է եղել նաև մի սովորություն, որ տանտիկինը Տյառնընդառաջի ժամանակ բացում էր տան դուռն ու պատուհանը, դուրս էր քշում ձմեռը և ներս էր հրավիրում գարունը:Ըստ Ս. Գրիգոր Տաթևացու՝ կրակն ունի հետևյալ խորհուրդները. «Խարույկի հուրը բորբոքելով՝ քրիստոնյաներն Աստծո սիրո հուրն են խնդրում, և կրակը ծառայեցնում են Աստծուն»:

Ծաղկազարդ թե ծառզարդար

Զատկի տոնից մեկ շաբաթ առաջ Հայ Առաքելական եկեղեցին նշում է Ծաղկազարդը: Այն խորհրդանշում է Քրիստոսի մուտքը Երուսաղեմ: Տոնի ժամանակ բացվում է եկեղեցու խորանը և մարդիկ եկեղեցուց օրհնված ուռենու կամ ձիթենու ճյուղեր են տանում տուն, որոնք էլ համարվում են չարխափան: Մարդիկ այդ ճյուղերը պահում էին տանը կամ ամբարներում, որպեսզի տարին առատ ու բարիքով լի լիներ և հիվանդությունները վերանային: Սակայն, դեռևս հեթանոսական ժամանակներից մարդիկ տոնել են Ծառզարդարը, որը նվիրված է եղել ծառի պաշտամունքին: Այն հնում կապված է եղել բնության զարթոնքի, գարնան գալստյան և մեռնող և հարություն առնող բնության աստվածության հետ՝ Արա Գեղեցիկի հովանավորչությամբ: Հնում հայ ժողովրդի մեջ եղել է որոշ ծառերի պաշտամունք, ինչպիսիք էն՝ ուռենին, սոսին, խնկենին, կաղնին, որոնք ունեցել են տիեզերքի հավերժականության, պտղաբերության և կենաց ծառի խորհուրդ:Հնագույն շրջանում ծառզարդարի տոնի ժամանակ սրբազան և խորհրդանշական ծառը զարդարել են գույնզգույն շորի պատառիկներով և տարբեր պտուղներով: Որոշ շրջաններում ծառերը զարդարել են ձվերով, ինչն էլ ունեցել է չարխափան նշանակություն:Հնում ծառզարդարի տոնի ժամանակ էր կատարվում նաև անձրևաբերության ծեսը, որը կատարվում էր Նուրի տիկնիկների միջոցով: Աղջիկները պատրաստում էին տիկնիկը, այն պտտեցնում տնետուն՝ խնդրելով Նուրիին անձրև

պարզևել չորացած հողին: Կա նաև կարծիք, որ տիկնիկը խորհրդանշում է ջրի՝ Նարե աստվածուհուն, և ծառզարադարի տոնն էլ հենց նվիրված է եղել նրա պաշտամունքին, քանի որ ջուրն այն կենսական տարրն է, առանց որի բնությունը չի կարող կենդանություն առնել:

Հեթանոսական շրջանում ազգային տոների մեծ մասը նվիրված էր աստվածների և բնության տարբեր տարերքների պաշտամունքին: Չնայած որ քրիստոնեության ընդունումով դրանցից շատերը փոխել են իրենց անվանումն ու խորհուրդը, բայց դրանցում գոյություն ունեցող մի շարք սովորույթներ մինչ օրս էլ պահպանել են իրենց արժեքը: Սակայն, ինչպես անցյալում, այնպես էլ այժմ տոներն ունեն նույն գործառույթը՝ այն է համախմբել մարդկանց տոնի և ծեսի ազգային գաղափարի շուրջ:

1.2.Ի՞նչ է ծեսը, ծիսակարգը և սովորույթը: Դրանց դերն ու նշանակությունը

Մշակույթը չէր պահպանվի և սերնդեսերունդ չէր փոխանցվի, եթե գոյություն չունենային դրան նպաստող որոշակի միջոցներն ու հանգամանքները: Դրանցից կարող ենք առանձնացնել պատմության ընթացքում ձևավորված ծեսերը:Ծեսը ավանդական, կամ սահմանված կանոններով կատարվող կրոնական արարողություն է, որին հավատացյալները վերագրում են մոգական և խորհրդավոր հատկություններ:

Ծեսը լայն տարածում ունի հավատալիքներում, կրոնում, կենցաղում, մարդկային հարաբերություններում և այլուր: Ծեսը խորհրդանշական ձևերով վերարտադրում է նաև ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում ազգի, հասարակության միասնականությունն ու հարատևությունը:Ծես նշանակում է նվիրում, ընտելացում տվյալ կրոնին և արժեքների համակարգին, ազգութանը, պետությանը: Ծեսերն աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Դրանք ստեղծվում են ոչ թե պատահական դեպքերի շուրջ, այլ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող իրադարձությունների կապակցությամբ: Ծեսերի շնորհիվ պահպանվել և դարեդար են փոխանցվել ազգային կյանքի բոլոր էական կողմերը, արտացոլել էթնոսին բնորոշ առանձնահատկությունները: Դարերի ընթացքում հարատևած ծեսերի բովանդակությունն իր բազմակողմանի ազդեցությունն է ունեցել այդ էթնոսի առօրյա կյանքի, կենցաղի, հոգեբանության և աշխարհայացքի վրա: Եթե մշակույթի ժառանգորդման առաջին ձևը համարենք ծեսը, ապա երկրորդը ծիսակարգն է: Այն ներառում է ավանդական գործողություններ, որոնք ուղեկցում են մարդուն, հանրությանը կյանքի և գործունեության կարևոր պահերին:Ծիսակարգը մարմնավորում է մարդկանց վարքի տարբեր կողմերը: Եթե սովորույթը մարմնավորում է ամենօրյա վարքային նորմերը, ապա ծիսակարգին դիմում են միայն արտակարգ, ոչ ամենօրյա իրավիճակներում (ծնունդ, կնունք, պսակադրություն, մահ, և այլն):Մշակույթի ժառանգականության փոխանցման մյուս ավանդական ձևը սովորույթն է: Սովորույթը վարքի կարծրատիպացված միջոցն է, որը վերարտադրվում է որոշակի հասարակությունում կամ սոցիալական խմբում և սովորական է նրա անդամների համար: Սովորույթները կենցաղի պահպանված սովորական մասն են, ծեսերի և ծիսակարգերի բեկորները, որոնք կորցրել են իրենց առաջնային նշանակությունը, բայց պահպանել են մարդկանց միավորելու գործառույթն ամենօրյա ընդունված նորմերով: Սովորույթը նաև կենցաղում վարքի կարգավորիչ է, որը աստիճանաբար դարձել է ավանդույթ: Սովորույթի կայունությունը, նրա դիմադրողականությունը, փոփոխություններն այդքան մեծ են այն պատճառով, որ նրանք

միշտ ձևավորվում են հասարակությունում և ընդունված են նրա կողմից որպես «ստիպողական պահանջ»:

Ծես: Ծիսակարգ: Առանձնահատկությունները

Մշակույթի փոխանցման ձևերի մեջ կարևոր դեր ունեն ծեսերը: Ծեսը ներառում է վարքի այն ձևերը, որոնք իրենց էությամբ նշանային են, խորհրդանշական և չունեն նպատակային, գործնական բնույթ: Մարդաբան Մ. Դուգլեսը ծեսը սահմանում է որպես գործողությունների տիպեր, որոնք ծառայում են հավատքի արտահայտման համար, կամ էլ որոշակի խորհրդանշական համակարգերին պատկանելու ձևեր են: «Ծես» հասկացության տակ սովորաբար ենթադրվում է ստանդարտ, հաստատուն գործունեության հետևողականությունը, որն ունի արարողական բնույթ:Օրինակ՝ հայոց ավանդական կենցաղում բավական տարածված են խնձորի հետ կապված ծեսերը, որոնք հաճախ կազմակերպվում են Վարդավառին: Տոնի մասնակիցները խնձոր են խորովում և խորոված խնձոր բաժանում: Կամ՝ հարսանեկան արարողության ժամանակ խնձորի՝ որպես պտղաբերման խորհրդանիշ և այլն:Ծեսերն աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Դրանք ստեղծվում են ոչ թե պատահական դեպքերի շուրջ, այլ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող իրադարձությունների կապակցությամբ: Ըստ Ա. Սարգսյանի՝ «Ծիսակարգը խիստ կանոնակարգված է, անփոփոխ, միակերպ և հիմնականում կապվում է կրոնական պատկերացումների հետ, ունի զանգվածային բնույթ, այսինքն՝ դրան մասնակցում են մարդկանց մեծ խմբեր»:Մշակույթի փոխանցման ձևերի մեջ կարևոր դեր ունեն ծեսերը: Ծեսը ներառում է վարքի այն ձևերը, որոնք իրենց էությամբ նշանային են, խորհրդանշական և չունեն նպատակագործնական բնույթ: Աշխարհում շատ ու շատ ժողովուրդներ կրոնական, քաղաքական, գաղափարախոսական համակարգերի փոփոխություններից հետո իրենց ծեսերը, այնուամենայնիվ, շարունակում են կատարել: Ժողովրդական ծեսը ծրագրված երևույթ չէ, այն ժողովրդի հավաքական և տևական ստեղծագործության արդյունք է, անընդհատ փոփոխությունների ենթակա, բայց միաժամանակ հիմնական բաղադրիչներով խիստ պաղպանողական: Հայկական ծեսերը շատ հարուստ երգեր ու պարեր ունեն: Երգերի բովանդակությունը միշտ համապատասխանում է տվյալ ծեսի իմաստին, իսկ ծեսերին բնորոշ ուտելիքները, խնջույքները, տոնական հագուստը, նվերները ունեն իրենց առանձնահատկությունները: Դրանք բոլոր տոներում են առկա: Ոչ մեկն ինքնանպատակ չէ: Խնջույքները չեն կազմակերպվում ուտել-խմելու համար, յուրաքանչյուր ծեսին կազմակերպվող խնջույք պետք է համապատասխանի տվյալ ծեսի իմաստին, ըստ որի համապատասխանեցման համար էլ ընտրվում է ծեսը կազմակերպելու

վայրը, ժամը, մասնակիցները, ուտեստների տեսակները:Այսպիսով, հանդես գալով որպես հասարակական կյանքի հոգևոր ոլորտի խտացումներ՝ ծեսերը, սովորույթները անգնահատելի դեր ունեն՝ յուրովի լրացնելով ավանդույթի ընդհանուր կառույցի առանձին կողմերը, որի շնորհիվ ավանդույթը դառնում է միասնական և ներդաշնակ մի ամբողջություն: Դրանցում ժողովուրդը հանդես է գալիս և՛ որպես ստեղծագործ, և՛ որպես գործիչ, և՛ որպես քննադատ: Երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ավանդույթների, ծեսերի, տոների տեսքով նաև:

Բնականոն կյանքով ապրելու պայմաններում ժողովրդական տոները չէին իմաստազրկվի, այլ նոր որակ, նոր ձև կստանային և կշարունակեին կատարել իրենց կարևորագույն դերը՝ մարդկանց համախմբելու, ազգային և մարդկային արժեքները պահպանելու կարևորագույն գործառույթով: Երեխան դաստիարակվում և սովորում է՝ յուրացնելով մեծերի փոխանցած մշակույթը: Եթե ընտանիքում չի պահպանվում ավանդականը, ապա այդ գործն իր վրա է վերցնում պետությունը կամ կրթօջախը՝ սկսելով նախակրթարանից և շարունակելով մինչև դպրոցն ավարտելը: Ծեսերին նոր կյանք տալու համար հարկավոր է նախ շատ լավ յուրացնել ավանդականը, ճանաչել այն միջավայրը, որտեղ ստեղծվել են դրանք: Լավ իմանալ երգերն ու պարերը, ծիսական գործողությունները, պարագաները, դրանց խորհուրդն ու պատրաստման տեխնոլոգիան: Ո՞ր գործողություններն են, որ կարելի է կատարել կամ փոքր-ինչ ձևափոխել կամ լրացնել նորով: Ո՞ր պարագաներն են, որոնք շատ լավ կմտնեն ժամանակակից ծեսի մեջ կամ կստանան նոր ձև, կամ էլ նորերը կլինեն: Սրանք այն հարցերն են, որոնք առաջ են գալիս և որոնք լուծելու խնդիր ունենք: Իհարկե, ծեսին նոր կյանք տալ՝ չի նշանակում ակունքից այնքան հեռանալ, որ այն դառնա ոչ թե ծես, այլ անհատ մարդկանց երևակայությամբ ստեղծված հնի ու նորի վատ սինթեզ: Ծիսական հիմնական կարգը պետք չէ շփոթել տոնական մասի հետ: Յուրաքանչյուր ծես, ծիսական գործողություններից բացի, ունի տոնական մաս, որտեղ կարելի է կատարել ժամանակակից բարձրարժեք երգեր ու պարեր: Նախագծի նպատակն է ծեսը, տոնը դարձնել երեխայինը, որն էլ կլինի ոչ միայն մասնակից, այլև փոխանցող: Երեխան, քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով, յուրացնում է ծեսը:

Գլուխ 2 .Ազգային ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

2.1 Երեխայի զարգացման կարևորագույն նախապայմանը

Ուսումնական միջավայրը երեխաներին տալիս է ժամանակ հնարավորություն ճանաչելու իրենց շրջապատող աշխարհը և ստեղծագործաբար արձագանքելու աշխարհում կատարվող երևույթներին: Երեխայի զարգացման կարևորագույն նախապայմանը զարգացման բոլոր ոլորտների՝ ֆիզիկական, սոցիալական, հուզական և իմացական փոխկապվածությունն է: Երեխայի կրթադաստիարակչական գործում առաջնային դեր ունի ընտանիքը:

«…Նախակրթարանի երաժշտության խնդիրները քննելիս անպայման պետք է հիմնվենք մինչև այսօր արվածի, այսինքն՝ փորձի վրա: Մինչև այսօր ասելով՝ նկատի ունենք մեզ մոտ կիրառված դաստիարակության՝ դասերի փորձը: Ելակետ պետք է ունենալ ազգային դպրոցը, որովհետև չենք կարող արհամարհել այն, ինչը հարազատ է ժողովրդին, և չենք կարող հիմնական տեղը տալ կասկածելի նորամուծություններին: Նորամուծություն կատարվում է, երբ յուրացված է ավանդականը: Սակայն ամենամեծ ու ամենացանկալի նորամուծությունը կրթության ասպարեզում այսօր այն կլինի, որ ինչ-ինչ պատճառներով իր արմատներից հեռացած ժողովրդին վերադարձվի իր իսկ ստեղծածը: Հայ մեծագույն մանկավարժները ամենամեծ դպրոցը համարել են ժողովրդական դպրոցը և իրենց ստեղծած կրթական համակարգը փորձել են մոտեցնել ժողովրդական դպրոցին, որովհետև վերջինս առավելագույն արդյունքներին հասել է բնության թելադրած պարզագույն միջոցներով: … Եվ այսօր, երբ մենք փորձում ենք ուղղել մեր դպրոցներում և նախակրթարաններում ուսուցման կոպիտ սխալները և մեր կրթությունը աշխարհի առաջնակարգ դպրոցների օրինակով փորձում մոտեցնել ժողովրդական դպրոցին, պիտի գիտակցենք ու սովորենք տեսնել եղած լավագույնը, որովհետև եթե մեկ դար առաջ մենք ունեցել ենք, այսօր կորցրել ենք ամենակարևոր ու պիտանի ձևն ու սկզբունքը: …

Արթուր Շահնազարյան

Մանկապարտեզում հատկապես ոչ մի զիջում չի կարելի կատարել: Երեխան բաց աչքերով նայում է հրաշք աշխարհին, և թե ինչ կլսի ու կտեսնի, կախված է մեզանից: Երեխայի բաց հոգու աչքերի մեջ ամենազորեղը առաջին տպավորությունն է, և դա հետագայում սնում է նրա սիրտն ու հոգին, թևավորում նրա երևակայությունը, ուրեմն նախ և առաջ նրան պետք է մատուցել ամենալավը և փորձվածը՝ ամենալավ երգերն ու պարերը, ամենալավ խաղերն ու գույները, սովորում խաղի միջոցով:

… «Ժողովրդական երգերի տարածմանը մեծ զարկ տվին նախկին ծիսական դպրոցների երգեցողության ուսուցիչները, որոնք սնուցեցին մատաղ սրտերն ու մանուկ զգացումները պարզ ու գողտրիկ, բուն գեղջուկ երգերով: Այդ դպրոցում սովորող անմեղ մանուկները առան այդ երգերը և տարան, հնչեցրին օտարացած, խորթացած տան շեմքից ներս, կրթված, բայց հայրենի սրտի զեղումներին կարոտ ընտանեկան հարկի տակ»:
Մանկապարտեզում հատկապես ոչ մի զիջում չի կարելի կատարել: Երեխան բաց աչքերով նայում է հրաշք աշխարհին, և թե ինչ կլսի ու կտեսնի, կախված է մեզանից: Երեխայի բաց հոգու աչքերի մեջ ամենազորեղը առաջին տպավորությունն է, և դա հետագայում սնում է նրա սիրտն ու հոգին, թևավորում նրա երևակայությունը, ուրեմն նախ և առաջ նրան պետք է մատուցել ամենալավը և փորձվածը՝ ամենալավ երգերն ու պարերը, ամենալավ խաղերն ու գույները, այսինքն՝ նյութի թե՛ ընտրության և թե՛ մատուցման ձևը պիտի լինի հնարավորին չափ միակը, լավագույնը:

2.2. Ազգային ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները

Յուրաքանչյուր սերունդ ապրում է իր ժամանակաշրջանում: Այդուհանդերձ կարիք ունի նախորդ սերնդի փորձառություններին ու նրանց ցույց տված ուղղություններին: Ազգային ծեսն այն միջավայրն է, որտեղ բոլորը, ազգի մշակույթը յուրացրած, ինքնադրսևորվելու, ստեղծագործելու, որոնելու, հայտնաբերելու, երևակայելու, իմացածը կիրառելու լայն հնարավորություն ունեն: Այսօր, հատկապես գյուղական վայրերում, դեռ կարելի է տեսնել փոքրիկ «հարսիկի» ձեռքը բռնած մանկանց, ովքեր Ջանգյուլումի գովքի տեսարանն են ներկայացնում՝ երևի հստակ չիմանալով Համբարձման ծեսի ամբողջական կառույցը: Կան վայրեր, որտեղ դեռ պահպանվել է Համբարձման ծեսը և իրականացվում է: Ջատկական ծեսից մնացել է «Ձվակռիվը», բրինձով, չամչով փլավ եփելը, ամանորյա ազգային ծես ուղղակի չկա, Բարեկենդանի մասին գիտեն Թումանյանի պատմվածքից և ընդհանրապես չեն իրագործում ծեսը, իսկ Վարդավառից մնացել է միայն ջուր ցողելու ծիսական գործողությունը:
Ծեսը խաղարկվում է ոչ թե մեկ տարիքային խմբում, այլ տարատարիք սովորողների, դասավանդողների, դասվարների, սաների, դաստիարակների, ծնողների հետ միասին: Մեծերը ստեղծում են ծիսական միջավայր՝ ծիսական պարագաներով, ծիսական կերպարներով, ծիսական գործողություններով, ծիսական կերակրատեսակներով, տարվա եղանակին բնորոշ մրգերով: Այդ միջավայրում մանուկն ունի իր տեղն ու դերը, որտեղ խաղարկում է ծիսական գործողություններ, խաղում ինչպես ծիսական, այնպես էլ՝

մանկական խաղեր, որտեղ օգտագործվում են տվյալ ծեսին բնորոշ պարագաներ, ինչպես, օրինակ. Ամանորին՝ ընկույզ, Զատիկին՝ ձու, Համբարձմանը՝ ծաղիկ, և այլն: Այսինքն, մանկանը ծեսի մեջ ներառելու լավագույն արդյունավետ միջոցը խաղն է: Ամեն տարիք իր չափով է ներառվում այդ գործընթացին, խաղում իր տարիքին բնորոշ հմտությամբ: Զարգանում է իրավիճակն ըմբռնելու կարողությունը, մտքի ճկունությունը, երևակայությունը, հիշողությունը, ուշադրությունը, կամքը, մկանների լարումը, ինքնուրույն աշխատելու, վերլուծելու, համադրելու, շոշափելու, ուսումնասիրելու, իր դիտողությունները հաղորդելու կարողությունը, երևույթների մեջ կապ գտնելու, ճիշտ կողմնորոշվելու, շարժումներին տիրապետելու կարողությունը, հարստացնում է բառապաշարը և այլն: Ազգային ծեսերի խաղարկման մեջ մանուկը հիմնականում կարող է ընդգրկվել իր տարիքին համապատասխան ծիսական գործողություններ կատարելով, ծիսական և մանկական խաղեր խաղալով: Ծեսն ամբողջությամբ իմանալու, ըմբռնելու և իրենը դարձնելու համար, հարկավոր է անպայման մասնակից լինել, ներառվել նախապատրաստման գործընթացին, ծիսական միջավայրի ստեղծմանը, միասին պատրաստել ծիսական պարագաներ, ծիսական կերակուրներ, սովորել ծիսական ազգային երգեր, պարեր, ծեսի խաղարկման ընթացքում իմանալ իր դերը, գործողությունների այն բաժինը, որն իրենն է: Սաները, ազգային ծեսը խաղարկելիս, ծանոթանում են ազգային խաղերին, սովորում նոր խաղեր և նպաստում դրանց տարածմանը, զարգանում է իրավիճակն ըմբռնելու կարողությունը, մտքի ճկունությունը, երևակայությունը, հիշողությունը, ուշադրությունը, կամքը, մկանների լարումը և այլն: (Ազգային բակային խաղեր): Ազգային ծեսերի խաղարկման մեջ սաները հիմնականում կարող են ընդգրկվել իրենց տարիքին համապատասխան ծիսական գործողություններ կատարելով, ծիսական և մանկական խաղեր խաղալով: Բնականաբար, ծեսը խաղարկվում է ոչ թե միայն սաների, այլ դաստիարակների, ծնողների, իսկ դպրոց պարտեզներում՝ սովորողների հետ միասին:

«Ուսուցի՛չ, պարոններ և քույրեր, զգուշությամբ և երկյուղածությամբ մոտեցեք դաստիարակության գործին, խիստ փափուկ պաշտոն մըն է ձերը: Դաստիարակելու կոչված եք սերունդ մը, որ ազգն է, սխալ ուղղությամբ ազգ մը կը խորտակեք վերջը: Մանուկն ինչ զգացումի տակ որ ըլլա, այդ զգացումը կարտահայտե որոշ երգերով: Երգը ներքին հոգեկան զգացումին արտահայտության մեկ ձևն է, ուրեմն շարժումն է, և պարն էլ, ինքնին շարժումն ըլլալով, երգը կզուգորդի պարին հետ: Զգացումներն ինչ ուղղությամբ որ ընթանան, երգն ու պարն ալ նույն արտահայտությամբ երևան կուգան: Արդ կըրնա ըմբռնվիլ, թե որքան կարևոր են մանուկին դաստիարակության մեջ երգեցողությամբ ընծայվելիք հոգածությունն ու պարտավորությունը»:

Կոմիտաս

Ծիսական խաղերը, բացի հետաքրքիր ու տպավորիչ լինելուց, զարգացնում են մանր և խոշոր մկանային մոտորիկան, ընդհանուր շարժումային համակարգը, դրանք թատրոնի նման սինթետիկ արվեստ են դառնում, որոնք ինտեգրում են ինչպես երեխայի զագացման բոլոր ոլորտները, այնպես էլ գործունեության տարբեր ձևերը: Աշխատանքի ընթացքում օգտագործված հիմնական մեթոդներից են. իրավիճակների խաղարկում, դերախաղ, խմբային աշխատանք: Սաների հետ աշխատանքի ընթացքում հանդիպում ենք հարցի լուծման այնպիսի տարբերակի, որը չի մտնում մեծի տրամաբանության ու երևակայության սահմանների մեջ: Ազգային ծեսերի խաղարկման մեջ մանուկը հիմնականում կարող է ընդգրկվել իր տարիքին համապատասխան ծիսական գործողություններ կատարելով, ծիսական և մանկական խաղեր խաղալով: Ծեսն ամբողջությամբ իմանալու, ըմբռնելու և իրենը դարձնելու համար, հարկավոր է անպայման մասնակից լինել, ներառվել նախապատրաստման գործընթացին:

2.2. Ազգային ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

Յուրաքանչյուր սերունդ ապրում է իր ժամանակաշրջանում: Այդուհանդերձ կարիք ունի նախորդ սերնդի փորձառություններին ու նրանց ցույց տված ուղղություններին: Նախադպրոցական տարիքից է սկսվում մանկական աշխարհաճանաչմանն ուղղված տարրական գիտելիքների յուրացումը: Հիմնականում այստեղ է ձևավորվում նրա վերաբերմունքը աշխարհի, մարդկանց,շրջապատի և վերջապես գեղեցկության նկատմամբ: Այստեղ նրա մեջ սերմանվելու են մարդուն այսօր այնքան անհրաժեշտ բարության առաջին հատկանիշները: Հայ երեխայի հոգում բարության և առաքինության առաջին սերմնացանը քրիստոնեական տարրական գիտելիքների ուսուցումն է: Հայ երեխային հայեցի կրթությունը և դաստիարակությունն այնքան են անհրաժեշտ,որքան մեսրոպյան այբուբենը՝ հայոց լեզուն իմանալու համար: Երեխայի աշխարհընկալման, գեղագիտական ճաշակի և այդ ոլորտում տարրական պատկերացումների տեսակետից առանձնահատուկ նշանակություն ունեն ազգային սովորույթները, ընտանեկան հանդիսությունները,տաղավար տոներին նվիրված հետաքրքիր միջոցառումները:Փորձը ցույց է տալիս,որ երեխայի գեղագիտական և քրիստոնեական դաստիարակության իմաստով անգնահատելի նշանակություն ունեն ծիսական, ընտանեկան,ժողովրդական,ազգային հանդիսությունների մանկականաց-
ված միջոցառունմները: Դրանք սրտամոտ են երեխային քանի որ նա այս դեպքում դառնում է մասնակից ու կատարող, որն էլ նպաստում է երեխայի հստակ խոսքի զարգացմանը:Ծեսերը մանրակրկիտ ուսումնասիրելուց հետո ՝ որոշում ենք, թե ինչ ճանա պարհ են անցնելու երեխաները ՝ ծիսակատարությանը նախապատրաստվելիս: Առաջին և ամենակարևոր աշխատանքը ծեսի մասին տեղեկատվություն հավաքելն է տարբեր աղբյ ուրներից: Մի շարք ծեսեր հատուկ արարողություններ ունեն, որոնք կապված են մարդու օրգանիզմի, նրա կենսագործունեության առանձնահատկությունների, ֆիզիկական զարգացման հետ՝մեծ և փոքր պասեր, մարզական հատուկ խաղեր՝գոմշակռիվ, աքլորակռիվ, ուղտխաղացնոցի: Բացի այդ ծեսերի ժամանակ նախակրթարանների և դպրոցների սաները ազգային մանկական խաղեր են սովորում և խաղում. դա անպայմանորեն մտնում է բոլոր ծիսական ծրագրերի մեջ:Առավել հետաքրքրությամբ են անցնում Զատկի և Համբարձման ծեսերը:Համբարձման տոնակատարությունը մեզ մոտ տևում է մեկ շաբաթ :Համբարձման ծեսի ժամանակ երեխաների հետ պսակներ հյուսեցինք, ծաղիկներ հավաքեցինք,յոթ աղբյուրից ջուր հավաքեցինք:Երեխաներին սովորոցրեցի ջա նգյուլումի երգեր՝<<Մանի ասեմ ու շարեմ>>,<<Վիճակի երգը>>,<<Այ արևը,արևը>>:

Միջոցառումը սկսվում և ավարտվում է տերունական աղոթքով: Երեխաները հստակ պատկերացնում են Համբարձման տոնի իմաստը և գիտակցում դրա խորհուրդը:
Երեխաներհետմեծ ոգևորվածությամբ պատրաստվեցինք Զատկական ծեսին: Ծեսի ընթացքում երեխաները երգեցին ազգային երգեր՝<<Զպիկ-զպիկ >>, <<Դե գնա կիզամ >>, <<Հացթխիկի երգեր>>: Ծեսի ընթացքում նաև անդրադարձանք <<Ակլատիզին>> <<ՈՒտիս տատին>>.երեխաների մեջ փորձելով ավելի խորը սերմանել ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ: Երեխաների հետ սովորեցինք նաև Զատկակն ասիկներ ու ազգային պարեր, խաղացինք զատկական խաղեր: Այս բոլոր միջոցառումները մեծ արձագանք գտան ծնողները նույնպես մեծ ոգևորվածությամբ արձագանքեցին այն ամենին, ինչն ուղղված է իրենց երեխաներին մասնակից դարձնելու մեր ավանդույթներին, ծիսակատարություններին, ազգային տոներին:
Մանկապարտեզը համակողմանիորեն զարգացող մարդու ձևավորման բարոյական և հոգևոր արժեքների միասնության ապահովման հենասյուններից մեկն է: Այստեղից երեխան իր հետ կյանք կտանի բարության,գեղեցկության,ուրախության և սիրո առողջ սերմերը:Մենք ՝ մանկվարժներս, պարտավոր ենք ըստ արժանավույն կատարել մեզ վստահված գործը, այսինքն՝ հայ մանուկներին դաստիարակել հայեցի, քրիստոնեաբար:

Եզրակացություն

Եվ այսպես , ուսումնասիրելով մասնագիտական գրականությունը, կատարելով փորձարկումները, եկանք հետևյալ եզրահանգումների՝ Ծեսն այն միջավայրն է, որտեղ մասնակիցները նախապատրաստական և իրականացման ընթացքում կիրառում են իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները: Սանը քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով, յուրացնում են ծեսը: Կենդանի, ազատ միջավայրում, առանց սցենարով գրված, անգիր արած տեքստի, խաղարկում են ծիսական գործողությունները՝ երգելով, պարելով, խաղալով, ինքնադրսևորվելով, տեղում իրենց ստեղծած ազատ տեքստով ներկայացնելով, իրացնելով իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները:

Ծիսական միջավայրում կատարում են նախօրոք ուսուցանված երգերը, պարերը, մասնակիցներն ազատ են իրենց ստեղծականության մեջ, միևնույն ժամանակ նախօրոք անպայման պատրաստվում են՝ ծանոթանալով ինչպես ծեսի, այնպես էլ ծեսի հետ կապված գործողությունների, ծիսական պարագաների հետ, որոշում՝ ինչ և ինչպես են կատարելու, որ գործողություններն են, որոնք այսօրվա կյանքով ապրողը կարող է կատարել: Բնական կյանքի տեսական գործողություններին մասնակցելիս երեխայի խոսքը ավելի արդյունավետ է զարգանում, որովհետև երեխան առանձին դասեր չի անում, այլ բնական իր համայնքի, ընտանիքի և այլնի կյանքին մասնակցելու միջոցով, խաղերի միջոցով, մեծերի հմուտ ղեկավարման միջոցով, զարգացնում է իր խոսքի և երևակայության կարողությունները: Գործնական աշխատանքը ցույց տվեց, որ նախադպրոցական տարիքի երեխան ծիսական բնական, անկաշկանդ, ազատ միջավայրում կիրառում է իր գիտելիքները, հմտություն է ձեռք բերում, զարգանում է երևակայությունը, կարողանում է ազատ արտահայտել իր միտքը: Կարողանում է կողմնորոշվել և կատարել համապատասխան գործողություններ՝ բանավոր խոսքի միջոցով հիմնավորելով, ներկայացնելով իր երևակայությամբ ստեղծած միտքը:

Ծեսով ուսուցման մանկավարժությունը ազգապահպահության լուրջ բաղկացուցիչ է:Ազգային ծեսերը անհրաժեշտ է դարձնել մեր կյանքի անբաժան մասը՝ սկսելով նախակրթարանից , այնուհետև դպրոցներում մեծ դեր հատկացնել մեր ազգային ծեսերի ուսումնասիրությանը, երեխաներին դրա մասնիկը դարձնելով կարելի է իրագործել բոլոր ծեսերը ինչ որ մի տեղ նոր տարրեր ներմուծելով, որպեսզի երեխաներին էլ հետաքրքիր և ուսուցողական լինի, որտեղ նրանք կարող են երգել , պարել խաղալ և ճանաչել մեր ազգայ ինը:

Օգտագործված գրականության ցանկ

1. <<Ազգային տոները հեթանոսությունից մինչև քրիստոնեություն>>

2. Հրանուշ Խառատյան-Առաքելյան .,Հայ ժողովրդական տոները

3. Զեմֆիրա Ենոքյան., Ազգային տոները որպես հայեցի դաստիարակության կարևոր նախադրյալ

4. Տաթև Սահակյան ., Ծեսը որպես ինտեգրված թեմատիկ միավոր